

ԱՇԽԱՐՀԱԲԱՐ ԼԵԶՈՒԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Վենետիկի «Բազմավէպը» իւր ալս տարւալ մարտ ամսաւ համարը (հատոր խը) սկսում է Հալը Բարսեղ Սարգիսեանի մի լուծածով, որի վեր-
նագիրն է՝ «Աշխարհաբարը գրաբարի ձեռքով զարգացնելու և կանոնաւորելու
և գրաբար լեզուն աշխարհաբարի մէջ կենդանացնելու խնդիրն»:

Ահա ալ լուծածի ըովանդակութիւնը, լուծածի, որը գրւած է շատ
անմարսելի հաւերէնով և որի մտքի թելը՝ դրւածքը մի քանի անգամ կար-
դալով և, նախընթաց մտքերը չը մոռանալու համար, կարևոր կէտերը գրչի
անցնելով, այն էլ՝ չալանած մտքերը չետ ու առաջ դնելով միայն կարելի
է որոշել. Յօդւածի ըովանդակութիւնը մենք ամփոփում ենք հետևեալ
կէտերի մէջ:

1. Հալոց լեզուն իւր կազմը ստացաւ սկսած Արամից մինչ Տիգրան
և Տիգրանից մինչ Վազարշակ:

2. Ալի լեզուն նոր կենդանութիւն առաւ Պարթև-Արշակունեանց ըն-
տանիքի հաստատուելովը Հալաստանում, որով հաւերէնի մէջ մուտ գործե-
ցին պարթևական բառեր ու խօսքեր:

3. Զորորդ դարու վերջը ալի լեզուն, որ էր արարատեան լեզուն,
ունէր գրական լինելու հարկաւոր չափութիւնները:

4. Ալի լեզուն ազնւացաւ լուծական դպրոցների գրականութեան
ազդեցութեան ներքո՝ Տրդատից սկսած մինչ հալոց մեկնեսան Վառմապուհ:

5. Բայց ալի լուծաբէնի քանձերը տարրականացան հալոց լեզուի մէջ
հալոց գրերի գիւտից չետ, երբ սկսեց հալոց դպրութիւնը: Այլ դպրու-
թեան ոսկէ դարն էր Ս.-րդ դարը:

6. Ս.-րդ դարու գրաբարը հետագայ դարերում ընկաւ, աղաւաղեց:

7. Գրաբարի աղաւաղումից ծնեց այն աշխարհիկ գրական լեզուն,
որը իւր կազմը ստացաւ 12 և 13 դարերում և որի ներկայացուցիչն է
Մխիթար Գօշի Դատաստանագրքի թարգմանութիւնը
Սմբատի ձեռքով:

8. Ալի աշխարհիկ լեզուն կազմեց ոչ թէ գաւառա բարբառներից,
այլ գրաբարից:

9. Չը նալած որ աշխարհիկ գրական լեզուն կազմած էր 13 դարում,
բայց շարունակում էին դրել գրաբար մինչ 19-երորդ դարու կեսը:

10. Ան աշխարհիկ լեզուն, որ կազմած էր դեռ 13 դարում, զար-
գացաւ, որովհետև հետագայ դարերում նա զուրկ մնաց կենդանի սերունդ-
ների և գաղափարների աջակցութիւնից և ընդհակառակը, նա աղաւաղ-
եց թաթարական և այլ լեզուների ազդեցութեան ներքոյ:

11. 13-երորդ դարում կազմ ստացած աշխարհաբարը, աղաւաղւելով,
ստացաւ այն ձևերը, որոնց ներկայացուցիչներ կարող են համարւել, արե-
մտեան հաւերէնի համար՝ հալը Ազգերեանի Դեղ կենաց, իսկ արե-

եղեաններն համար՝ Սալաթ-Նուլալի և Բոլալանցի
«Վէրք Հալապտանին»:

12. Այդ, 13 դարուց իւր զարգացման մէջ ընդհատւած լեզուն ալժմ
մեր զրական աշխարհիկ լեզուն է, որը մենք զարգացնել Լնք կարծում,
ներմուծելով նորա մէջ օտար բառեր և զարձաձնել:

(«Բաց զարմանքն ալն է, զի քառասուն տարի առաջ աշխարհաբարին
ռահահորդ եղող հեղինակութեանց վերոյիշեալ թերութիւնքն՝ ալժմու
արագադիր դպիրներս և քաջալարժ սուրհանդակներս իսկ՝ զործած կը
լինինք, և բ կը խղճեմք դեռ աշխարհաբարի անձուկ պարու
նակէն ռանգիւ մ'անդին անցնել և դասական լեզուէն
պատշաճ նպաստներ ընդունել. մինչդեռ օտար բանից և
բացատրութեանց թիւն՝ օր քան զօր կ'աճի, և բողոքող-
ներ հազիւ թէ կը գտնուին»: Նր. 87):

13. Հարկատր է, որ աշխարհաբարը գրաբարի ձեռքով կաղմակերպի
և հարստանալ:

Բաց ահա և հայր Բարսեղ Սարգիսեանի դեռ ևս շարունակելի լոգ-
ւածի վերջաբանը.

«Հալութիւնն և հալ լեզուն՝ իւր զարգացման ալն զարուն մէջ միալն
պիտի կարենալ ինքզինքն անկարօտ համարել դասական լեզուին, և բ
կարող լինի. դերաղանցել Ն.-րդ դարը. ալ ալս բանս թէ և կարելի՝ բաց դեռ
չատ հեռի է: Որքան կը սխալին նոքա՝ որոնք կը կարծեն, թէ արդէն
իսկ ալլալիսի դարու մի հասած են. և թէ գիտութեամբք և թէ ևւրոպա-
կան լեզուաց կենդանի ազդեցութեամբ՝ կարող են լեցնել ալն ամեն լեզ-
ուական պէտքերն, ինչպէս կը լեցնէին միւր նախնիք՝ հայկական բարբա-
ռոյն ձեռքով, և հարստացնել զալն և կատարելագործել: Այո, կարող են
հարստացնել, բաց ալն կերպով՝ որով փորձեցին երբեմն հարստացնել
Դաւիթ Անլաղթի և իւր համախոհքը, և ոչ ալնպէս՝ ինչպէս ըրին Նզդիկ,
Սահակ և Մեսրոպ. ոչ արագալ մնացին անհասկանալի և պիտի մնան
տակալին ի խրատ և ի լանդիմանութիւն մեր օտարամոլներուն, ոչք
քնաւ չեն խղճեր օտար ազգաց գաղափարաց հետ ի միասին՝ առնուլ և
բացատրութիւնս օտարս, առանց իւրացուցիչ զօրութեան և հալացնելու՝
որոնք չեն միանար հալոց լեզուին հետ, ալ կը մնան անմարսելի. ալնպէս
զի, եթէ չաճախեն քան զչալին՝ կարող է ապագային ալդ աշխարհաբարն
ևս ենթարկել օտար ազդեցութեան, ինչպէս ենթարկեցան երբեմն ասկէ
տարբեր աշխարհաբարներ: Յիրաւի, ալս բանին համոլեւելու համար՝ բա-
ւական է կարդալ «Մուրճ»-ի 1890 թիւն հրատարակած առաջին ամ-
սաթերթի չառաջաբանն և նման ուրիշ չօղաձնելի ևս ալլուր, ուր
«ամեն ալն տեղի դեռն տ» (ամենահասկացող) և ալլ երկզխեան, ճիւղներ
կը սոսկացնեն զհալ լսելիս. իսկ բացատրութիւններն աւելի գերմանական
են՝ քան հայկական»:

Բալց ահա ալժմ և խրատը՝

«Լաւ կը լինէր, եթէ սոքա իրենց օտարերկրեալ գիտութեան հետ ի միասին՝ իրենց մալրեցի լեզուն ևս լաւ կերպով ուսանելէն վերջ՝ ձեռք զարնէին ալգալիսի խմբագրութեանց փափուկ պաշտօնին»:

Ալապիսով, որպէս տեսնում է ընթերցողը, հալը Բարսեղ Սարգիսեանը հալոց լեզուի պատմութեան մի դաս տալուց լետ, անցնում է խրատի՝ թէ երբ և ինչպէս պէտք է խմբագրական գործին ձեռնարկել:

Բալց նախ՝ մի փոքր լեզուից խօսենք: Հալը Սարգիսեանը, նորա հետ և «Բազմալէպի» խմբագրութիւնը, իսկ սորա հետ նաև Վենետիկի Մխիթարեան ամբողջ միաբանութիւնը, դեռ ևս ձեռքից բաց չեն թողել ալն խնդիրը, որի մասին մեզանում լրջօրէն կարելի էր խօսել միւրիալն տասնեակ տարիներ առաջ: Այդ չարագիւտ հալերը մինչև ալժմ չեն կարողացել հասկանալ, որ մեզանում ոչ ոք չի հերքում գրաբարի նշանակութիւնը արդի աշխարհիկ լեզուի զարգացման համար. նոքա իրանց բոլորովին կոյր են ձևացնում, չ'ուզենալով տեսնել մեր աշխարհիկ լեզուի մէջ գրաբար բառերի ալն ահագին քանակութիւնը, որը օրէցօր աւելանում է և ոչ պակասում: Կամենում է արդեօք հալը Սարգիսեանը պնդել, թէ ալն լեզուն, որով գրած են հէնց ալս տողերը, ոչնչով չեն տարբերում Սալաթ-Նօվալի և Աբովեանցի լեզուից, քան օտար բառերի շատութիւնով: Քանի օտարամուտ բառեր կը գտնէք «Մուրճի» հէնց ալս անգամաւ տետրակում:

Արդի հալոց գրական լեզուն զարգանալու ամենալաւ ճանապարհի վերալ է: Ալն բոլոր բառերը, որ մեզ պակասում են, մենք վերցնում ենք կամ ժողովրդի բերանից, կամ գրաբարից, կամ օտար լեզուներից, նալած նիւթին, հանգամանքին, ժամանակին: Բալց հալը Սարգիսեանը չի էլ չիլում մեր լեզուն հարստացնելու: Կարեւորագոյն թղթիւրներից մէկը, որ դաւառա-բարբառներն են: Նա կարծում է, որ ինչ բառ մեզից մէկն ու մէկը չը գիտէ, իսկոյն պէտք է դիմէ գրաբար բառարաններին. և մտցնէ ու մտցնէ գրաբար բառեր ու գրաբար ոճեր, արդարացնելով իրան, թէ աշխարհաբարը «մանկական տիոց մէջ է, ուրեմն հարկ է որ նա իւր հինաւուրց մօր ստեամբը սնանի», խօսելով հալը Սարգիսեանի ոճով:

Ոչ. մեզանում ալգալէս չեն վարւում. մեր աշխարհիկ լեզուն զարգացնելու և հարստացնելու համար՝ դռները չենք փակում ոչ ժողովրդական բարբառների, ոչ գրաբարի և ոչ օտար լեզուների առաջ, թէև ալգ դեռ չի նշանակում, թէ մենք գրական ենք չինում ամեն ժողովրդական, ամեն գրաբար և ամեն օտար բառ: Կան դէպքեր, ուր գերադասութիւնը տալիս ենք մէկին, երկրորդին կամ երրորդին: Բոլորովին զուր հառաչանքներ է արձակում հալը Սարգիսեանը մեր օտարամուտութեան համար: Մեզադրել

մեղ օտարամոլութեան մէջ—միանգամայն անհիմն է: Յաճախ մենք դուրծ ենք ածում մի օտար բառ ալն պատճառով, որ ալդ օտար բառի նշանակութիւնը զարգացած դասի համար աւելի որոշ է, քան նոյնանշան հայկական բառը: Բայց երբ ալդ խօսքը ընդհանրանում է մեր խոսակցական կամ գրական լեզուի մէջ, մենք դէմ չենք լինում, եթէ նորա տեղը հայկականը ընդունել կամ ստեղծել և ընդհանրանալ:

Դուք գանգատում էք, թէ մեր «բացատրութիւններն» աւելի դերմանական են, քան հակական: Մենք դորան կը պատասխանենք:—Աշխարհաբար զրողներից նոքա, որոնք օտար և զարգացած լեզու չը գիտեն, չը գիտեն անքան ճիշդ գրել, արտաբերել, ցանկացած մտքերը անքան ճշգորէն արտաբերել, որքան օտար և զարգացած լեզուներ գիտցողները: Եւ երկրորդ, մեր արդի լեզուի ոգին և ուղղութիւնը արդէն անքան որոշ են, որ սխալ կամ ոչ հակական նախադասութիւնները իսկոյն աչքի են ընկնում և չեն մոլորեցնում ուրիշներին: Այդ մասին զուք կարող էք բոլորովին հանգիստ կենալ, ինչպէս և մենք բոլորովին ապահով ենք, որ «Բաղմամէպի» սոսկալի լեզուն մեզ երբէք չը պիտի կարողանայ օրինակ ծառայել:

Մեր ասածը, վերջ ի վերջուդ, այն է—Մեր արդի աշխարհիկ դրական լեզուն դեռևս կատարելություն չի հասած ոչ իւր ձևերի և ոչ խօսքերի հարստութեան կողմից։ Բայց այդ լեզուն զարգանալու լաւ ճանապարհի վերայ է։ Մեր արդի լեզուն, չը նալած իւր անկատարելութեանը, արդէն իւր կազմը ստացած է. նա ունի որոշ բնաւորութիւն, այնպէս որ նա գիտէ թէ ինչ կարող է ընդունել գաւառական բարբառներից, գրաբարից և օտար լեզուներից և ինչ չի կարող ընդունել իբր իւր մշտական սեպահականութիւն։ Մեր արդի լեզուն գիտէ որոշել աւելորդ գրաբարամոլութիւնը, բարբառամոլութիւնը և օտարամոլութիւնը. նա ատում է մէկն էլ, միւսն էլ, երրորդն էլ։ Իսկ նոքա, որոնք չը գիտեն կամ չեն ուզում չափը պահպանել, չեն էլ կարողանում ընդհանրութեան հաւանութիւնը գտնել և օրինակ լինել։

Կամենսկում էլք արդեօք, որ մեր հայերէնը կանոնաւորւի: Դորա համար ամենից առաջ պէտք է ձեռք վերցնել արնպիսի չօգւածներ գրելուց, որ պիտին է հար Բարսեղ Սարգիսեանի չօգւածը «Բազմալէպում»: Մի բան, որ արդէն վճռած է, չը պէտք է «խնդրի» կերպարանք տալ: Թող մեր գրողների թիւը, ընթերցանելի չօգւածների, երկերի, վէպերի թիւը աւելանալ, աճի, թող մեր գրականութիւնը ներկայացնէ նորադոյն սերունդներին հետաքրքրող և առաջնորդող գրածքներ—և հաւատացած կացէք, որ գրողները, հեղինակները շատ լաւ կ'իմանան, թէ ինչին պէտք է դիմեն, որ գտնեն իրանց պակասող խօսքերը և ոճերը: Իսկ երբ մեր գրական վաստակների թիւը չի աճիլ, և նորադոյն սերունդները ստիպւած կը լինին իրանց հետաքրքրող խնդիրները ուսանել միմիայն օտար լեզուով գրւած ամսագրերի և գրքերի միջոցով,—այն ժամանակ թէկուզ դուք

հաղար լողած գրէք լեզուն կանոնաւորելու հնարների մասին — ձեր խօսքերը կը ֆնան «ձալն բարբառոյ լանապատի»:

Գրականութիւնը աչդ ձևով հարստացնելու ամենագլխաւոր միջոցը՝ կենդանի հրատարակութիւններ լոյս ընծայելն է: Եւ դուք, լարգելի հալը Սարգիսեան, ալեքան անհեռատես էք, որ դալիս ու մեզ խորհուրդ էք տալիս՝ թողնել «Մուրճը» Զեր«Բազմավէպի» և կամ Մխիթարեան ուխտի հրատարակած գրաբար գրքերը ուսանելու համար: Դուք, ի հարկէ, չէք սպասում, որ մենք կը հետեւնք Զեր խորհուրդին, բայց միայն ալս մէկը հարկ ենք համարում Զեզ հանգստացնելու համար ասելու, որ եթէ «Մուրճի» խմբագրի լեզուն չէք հաւանում, գոնէ խմբագրի լատուկ լեզուն չի խանգարում, որ «Մուրճ»-ում տպւեն նաև հիանալի լեզուով գրած չօղւածներ, վէպեր, բանաստեղծութիւններ և ալլն, ալսինքն ալն, ինչ հարկաւոր է մեր լեզուն զարգացնելու, հարստացնելու և կանոնաւորելու համար:

Ա. Ա.